## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք հղում պատվարժան մասնակիցներիդ միջազգային գիտաժողովին, որը նվիրված է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Մեր գնահատանքն ենք բերում գիտաժողովի աշխատանքները կազմակերպած ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի և Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի բարեջան աշխատակիցներին:

Գիտաժողովի հրավիրումը արժևորումն է մեր երկու հարևան պետությունների բարի հարաբերությունների և գործակցության, որը հիմնված է մեր ժողովուրդների բազմադարյա առնչությունների և փորձառության վրա: Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը առիթ է նաև համագործակցության նոր հեռանկարներին անդրադառնալու և համատեղ նոր ձեռքբերումների ուղին նախատեսելու համար: Արդի մարտահրավերներին հանդիպման, երբ աշխարհը ալեխռով է հակառակություններից, պատերազմներից, երկակի չափանիշներով դրսևորվող անարդարությունից, երբ ոտնահարվում են անհատների, ազգերի ու պետությունների իրավունքները, առավել պահանջ-

ված ու կենսական են դառնում բարի կամքն ու գործակցությունը՝ հանուն խաղաղության և բարօրության հաստատման։ Հավատարիմ այս դիրքորոշմանը՝ Հայաստանը և Իրանը հետևողական են եղել արդյունաշատ հարաբերությունների կառուցման հարցում, ինչը նորանկախ մեր երկրին հնարավորություն է ընձեռել նաև դիմակայելու շրջափակման դժվարություններին և բազմակողմանի համագործակցության արգասիքներ բերել մեր երկու բարեկամ ժողովուրդներին։ Գնահատանքով ենք անդրադառնում արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում Իրանի իշխանությունների որդեգրած սկզբունքային դիրքորոշումներին և գործադրած խաղաղասիրական ջանքերին։

Ուրախալի է, որ մեր երկրների դիվանագիտական գործուն հարաբերությունները նպաստում են նաև հինավուրց մեր ժողովուրդների մշակութային և հոգևոր կապերի զորացմանը։ Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի գործունեությունը, ինչպես և Մայր Աթոռի հետ համատեղ իրականացված միջոցառումները միտված են աշխարհին ներկայացնելու քաղաքակրթությունների երկխոսության և միջկրոնական հանդուրժողականության մեր հարուստ փորձառությունը, որի կարիքն առավել քան երբևէ՝ այսօր զգում է աշխարհը։ Հավատավոր մեր երկու ժողովուրդները ապավինում են Բարերար Աստծո ողորմածությանն ու հոգածությանը՝ դավանելով խաղաղության, արդարության և համերաշխ գոյակցության համամարդկային արժեքները։ Այս հավատամքը պիտի օգնի մեր բարեկամ երկրների ընդհանուր ձգտումին ու կամքին՝ անխոով ու ապահով տարածաշրջան կառուցելու, որի վկայությունն են մեր ժողովուրդների օրինակելի հարաբերությունները, միմյանց հավատքի և սրբատեղիների նկատ-

մամբ հարգալից վերաբերմունքը։ Վերստին Մեր ժողովրդի երախտագիտությունն ենք հայտնում Իրանի իշխանություններին, որ հայկական հոգևոր արժեքների և բազմաթիվ սրբավայրերի հանդեպ դրսևորում են առանձնահատուկ ուշադրություն և ամենայն հոգատարություն։

Ուրախությամբ ենք անդրադառնում, որ մեր երկրների և ժողովուրդների բարի հարաբերությունների զարգացմանը իրենց ավանդն են բերում վերջին տասնամյակներում Հայաստանում հաստատված իրանցիները, ինչպես և Իրանի ավանդաշատ հայկական համայնքները, որոնք իրանցի բարեկամ ժողովրդի հետ մասնակից են երկրի առաջընթացին և ազատ են ապրելու իրենց հոգևոր ու ազգային արժեքներով։ Հիրավի, միջպետական, միջմշակութային և միջկրոնական հարաբերությունների ամրապնդումը շարունակելու է նպաստել փոխճանաչողությանը, հանդուրժողության զորացմանը և կրոնական մոլեռանդության ու այլատյացության դեմ համատեղ վկայությանը։ Հավատում ենք, որ բարի կամքի ու փոխհասկացողության և համագործակցության ուղին Բարձրյալի օրհնությամբ նոր արգասիքներ պիտի պարգևի մեր ժողովուրդների կյանքին։

Հայցում ենք Բարձրյալի օրհնությունն ու հովանին մեր երկրներին ու բարեսեր ժողովուրդներին։ Թող Աստված խաղաղություն պարգևի ողջ աշխարհին և մարդկանց հոգիներին։

Արդյունավետ և բարի ընթացք գիտաժողովի աշխատանքներին։